Գեյիմ Առուշանյան ԱՁ-ին
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ,Շիրակի մարզ,ք. Մարալիկ,Հր. Շահինյան 1/1/

« ՀՀ Շիրակի մարզ Անի համայնքապետարան »-ի
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Մարալիկ ՀՎՀՀ՝ 0554607/
Համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանից

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին/

Հարգելի պարոն Առուշանյան,

« ՀՀ Շիրակի մարզ Անի համայնքապետարան »-ի (այսուհետ՝ Գնորդ) և **Գեյիմ Առուշանյան ԱՁ**-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026թ.-ի **մարտի 17-ին կնքված պայմանագրով ուժի մեջ մտած ՇՄԱՆՀ-ՄԱԱՊՁԲ-26/23** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները:

Պայմանագրի 1. 1 կետի համաձայն՝ *Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 1 հավելվածով:*

Ստացվում է, որ Կողմերի միջև կնքվել է Ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի հիմքով Վաճառողը պարտավորվել է մատակարարել նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված Մատակարարումը պետք է կատարվի Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից յուրաքանչյուր անգամ պատվերն ստանալուց հետո մինչև 2026 թվականի եկտեմբերի 25-ը:

Գնորդի կողմից պահանջված ապրանքների նմուշները Ձեր կողմից ցույց է տրվել և համաձայնեցվել մատակարարել 10 օրացուցային օրվա ընթացքում: Գնորդի համապատասխան պատվերների հիման վրա որևէ ապրանք չի մատակարարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը (466 հոդվածի 2-րդ կետ)»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բազմիցս խախտվել են ապրանքների մատակարարման ժամկետները»:*

Ինչպես արդեն նշվեց, մինչ օրս գնորդի պահանջի հիման վրա որևէ ապրանք չի մատակարարվել Ձեր կողմից, ավելին Գնորդը փորձել է կապ հաստատել Ձեզ հետ մատակարարման ժամկետների խախտումների պատճառը հասկանալու համար, սակայն ոչ մի ապրանք չի մատակարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանը հարկադրված է 2026թ.-ի հունիսի 23-ից Պայմանագիրն միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն

ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն **Գեյիմ Առուշանյան ԱՁ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյան

23.06.2026թ.